

Արտաշես Ի. Շահնագարյան
Պատմ. գիտ. թեկնածու

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ԳԻՏՈՒԹՅԱՆԸ

Կրկին Ռամիզ Մեխթևի «գլուխգործոցի» մասին*

Մուտք

Ադրբեջանի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեխթևի ստորագրությամբ 2010 թ. հոկտեմբերի 29-ին հրապարակված «Գորիս-2010. արևուրդի թատրոնի տարեշրջանը» խորագրով «հակադարձումը»¹, որի լույս աշխարհ գալու համար առիթ էր դարձել Գորիսում 2010 թ. հոկտեմբերի 16-ին Սփյուռքի լրատվամիջոցների ներկայացուցիչների առջև Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը, արդեն արժանացել է հայ պատմագիտության փաստարկված պատասխանին²:

Ալմիհայտ է, որ մեխթևյան այս «գլուխգործոցը» ադրբեջանական «պատմագիտության» հարցադրումների խտացված ամփոփումն է: Նրանում հիմնավորապես աղավաղվել է ոչ միայն Հայաստանի, այլև տարածաշրջանի պատմությունը՝ հերթական անգամ հաստատելով Վ. Հյուգոյի «Այստեղով թուրքերն են անցել. ամեն ինչ ավերակված է ու սգավոր»³ եզրահանգման արդիականությունը: Այս առիթով հարկ է վերհիշել նաև XVIII դարի թուրք դիվանագետ Ահմեդ Ռեմսի «Մեր քաղաքական իմաստուններին Ալլահը ոչ խելք է շնորհել, ոչ էլ փորձառութ-

* Մեր ընթերցողներին արդեն ծանոթ է Ռ. Մեխթևի անունից հրապարակված «Ադրբեջանի «պաշտոնական կեղծագրին» պրոֆ. Բաբկեն Յ. Յարությունյանի փաստարկված պատասխանը, որը տպագրվել է «Վեն»-ի 2010 թ., N 4-ում: Այդ պատասխանի Յանրային հեռուստաընկերության ջանքերով իրականացված ռուսերեն թարգմանությունը տեղադրվել է <http://www.panorama.am/ru/politics/2011/02/21/historian/kayjebzoun>, լույս է տեսել նաև Մոսկվայում, իսկ անգլերեն տարբերակն առաջիկայում կհրապարակվի «Վեն» հանդեսի բացառիկ համարում: Այդ ամենով հանդերձ, համոզված ենք, որ Յայոց պատմության ադրբեջանական կեղծարարությունների դեմ պայքարն անհրաժեշտ է միայն միջազգային հանրության կարծիքն ապակողմնորոշելու՝ ադրբեջանա-թուրքական փորձերը չեզոքացնելու նպատակով և անիմաստ ու անգամ զավեշտական է այս առիթով գիտաժողովներ կազմակերպելու և ինքներս մեզ «համոզելու» կամ հակառակորդին «լուսավորելու» գործելակերպը: Մեր գիտնականների խոսքը միջազգային ասպարեզ դուրս բերելու հեռանկարում ենք դիտարկում նաև Արտաշես Ի. Շահնագարյանի հոդվածի հրապարակումը, որը լրացնում է պրոֆ. Բաբկեն Յ. Յարությունյանի հիմնարար հարցադրումները: Յոդվածն ընդունվել է տպագրության 25.05.2011 թ.: Խմբ.:

1 Տես Рамиз Мехтиев. Горис-2010: Сезон театра абсурда. <http://www.Trend.az>. 29.10.2010 (այսուհետև՝ Рамиз Мехтиев)

2 Տես Բաբկեն Յ. Յարությունյան, ՊԵՏԱԿԱՆ ՄԱՎՈՐԱԿԻ ԲԱՐՉՐԱՑՎԱԾ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեխթևի «Գորիս-2010. արևուրդի թատրոնի տարեշրջանը» գիտաքաղաքական աճապարարությունը, «Վեն», 2010, N 4, էջ 24-57: Տես նաև <http://www.panorama.am/ru/politics/2011/02/21/historian/>, (այսուհետև՝ Բ. Յ. Յարությունյան):

3 V. Hugo, L'enfant (Oeuveres complètes). Poésie I, Paris, 1985, p. 476.

յուն: Պատմության ուսումնասիրությունը նրանց գործը չէ»⁴ խոսքերը:

Կարծում ենք, սակայն, որ պատմական գիտության հանդեպ մեհֆիլյան հարձակման բազմաթիվ երեսները կարիք են զգում ևս մեկ անդրադարձի, որը հնարավորինս կլրացնի ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բաբկեն Հարությունյանի պատասխանում առկա սրբագրումների, հարցադրումների ու փաստարկների համակարգը: Պատճառն այն է, որ ամսագրային հոդվածին բնորոշ ծավալային սահմանափակությունը ճանաչված գիտնականին թույլ չի տվել (ցավոք, մեզ ևս թույլ չի տա) վեր հանելու մեհֆիլյան բոլոր նենգափոխումներն ու մեքենայությունները:

Մեհֆիլյան «հակադարձումը» լի է սկզբնաղբյուրների նպատակադիր անտեսմամբ և անհիմն դատողություններով, փաստարկների ու եզրահանգումների անօրինակ անհեթեթությամբ, բազմապիսի աճպարարություններով և գիտությունը կամայական հորինվածքի վերածելու այլևայլ հնարքներով: Եվ եթե չլինեին Մեհֆիլի ու նրա օգնականների անխուսափելի սայթաքումները, անգամ կարելի կլիներ կարծել, որ նրանք, իրոք, հավատում են իրենց բարբաջանքներին: Արդյունքում ընդամենը մի քանի դար առաջ Թուրանից իրենց հոտերի հետևից մեր տարածաշրջան թափանցած ու բնավորված քոչվոր թյուրքերի «աղբբեջանցի» հետնորդների՝ աղվանների ժառանգորդ և տեղաբնիկ ներկայանալու, իսկ հայերին եկվոր դիտարկելու գավեշտական փորձերը գերազանցել են անգամ տխրահռչակ Չ. Բունիաթովի 1960-1980-ական թվականների հայտնի ասպատակությունների սահմանները: Ոչ թե հանուն գիտության, այլ պարզապես օտարների աչքում աղբբեջանական «պատմագիտության» լիակատար վարկաբեկումը կանխելու նպատակով, Չ. Բունիաթովը ժամանակին նախագոչազարել էր, որ իր երկրում «ի հայտ են եկել տնաբույժ «մասնագետներ», որոնք այլ կիրառության արժանի համառությամբ ապացուցում են աղբբեջանցիների ծագումը շումերներից, մասագետներից և կովկասյան ալբաններին ևս թյուրքեր են համարում»⁵:

Նույն նպատակով մեկ այլ հայտնի կեղծարար՝ Իգորար Ալիևն իր հերթին նշել էր. «Մի շարք պատմաբաններ ու բանասերներ սկսել են առաջին պլան մղել Աղբբեջանի տարածքում թյուրքական տարրի հնության և անգամ տեղաբնիկության թեզը»⁶: Ալևն հայտ է, որ այս սահմանագիծը ներկայումս արդեն «հաղթահարվել է» Չ. Բունիաթովի հետնորդների կողմից և եթե այսպես շարունակվի, ապա նրանց «պատմագիտական» ասպատակությունների համար չի բավարարի ոչ միայն մեր տարածաշրջանը, այլև անգամ ողջ Երկիր մոլորակը:

Ինչպես ցույց են տալիս Ռ. Մեհֆիլի հրապարակմանը վերջին ամիսներին հետևած արձագանքները, Աղբբեջանում մնան «գլուխգործոցները» պարբերաբար ծառայեցնում են սեփական հասարակության ներսում հակահայ հիստերիայի նորանոր ալիքներ բարձրացնելու գործին: Այդ նպատակով, օրինակ՝ Աղբբեջանի ԳԱԱ Շաքիի տարածաշրջանային գիտական կենտրոնում 2011 թ. մարտի 16-ին ստալինյան ամբողջատիրությանը բնորոշ մեթոդներով կազմակերպվել է «քննարկում», որի ընթացքում կրկին հնչեցվել են հնամաշ հակահայ կեղծիքներ: Մեհֆիլյան խմբի պատասխանը գրքույկով հրատարակվել է նաև աղբբեջաներեն՝ տասնամյակներ շարունակ հարթեցվող աղբբեջանցիների բազմաշարչար ուղեղը հերթական անգամ արդուկելու նպատակով:

4 Հղումը տես Ն. Ադոնց, Հայկական հարցի լուծման շուրջ, Եր., 1989, էջ 56-57:

5 Յ. Մ. Бунятов, Этнолингвистические “изыскания” в романе Исы Гусейнова “Идеал”. — “Известия” АН Азерб. ССР (серия истории, философии и права), 1986, No 4, с. 105.

6 И. Алиев, Изучение проблем древней истории, философии и археологии в Азербайджане в 1977-1987 гг. — “Вестник древней истории”, 1988, No 1, с. 59.

1. Հակահայ հիստերիայի բուն պատճառը

Իր գործիսյան անաչառ ելույթում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ի տարբերություն Հայաստանի Հանրապետության տարածքն «ադրբեջանական հողեր» և ԼՂԻՄ-ն «ադրբեջանական հնագույն տարածքներ» հռչակելու, այսինքն՝ պատմությունը նենգափոխելու մասին հայր ու որդի Հեյդար ու Իլիան Ալիևների՝ ադրբեջանական «պատմաբաններին» համապատասխանաբար 1999 և 2004 թթ. տված ուղղորդիչ հրահանգների, կոչ էր արել ակտիվորեն ներկայացնել ճշմարտությունն Արցախի մասին⁷: Ավելորդ է ասել, որ ՀՀ նախագահը միանգամայն իրավացի էր, քանի որ Արցախի հայկականությունն ապացուցելու համար հայկական կողմը սեփական պատմությունը գունազարդելու, իսկ դիմացինինը սևացնելու կարիքն իսպառ չունի: Մինչդեռ, հայր ու որդի Ալիևների հրահանգներից⁸ ու մեհփիլյան «հակադարձումից» հետևում է, որ Ադրբեջանում լավ են հասկանում այդ իրողությունը: Դա է պատճառը, որ Ռ. Մեհփիլեն ու իր օգնականներն անցել են պատմությունը վերաձևելու բոլոր սահմանները: Բնականաբար՝ դա գոհացրել է Ալիև կրտսերին, որը վերջերս՝ 2011 թ. ապրիլի 26-ին, Ադրբեջանի ԳԱԱ տարեկան ժողովում ունեցած ելույթում հայտարարել է. «Շատ ուրախ եմ, որ մեր պատմաբանները ստեղծում են հիմնարար, շատ ծանրակշիռ աշխատություններ: Հատկապես հայ-ադրբեջանական, լեռնային դարաբաղյան հակամարտությունը մեզ թելադրում է, որ մենք այդ ոլորտին ավելի մեծ ուշադրություն դարձնենք, քանի որ այս տարածաշրջանի պատմությունը մշտապես նենգափոխվում, կեղծվում է հայերի կողմից: Ուրախ եմ, որ մեր գիտնականները, դրական արձագանքելով իմ կոչին, կարճ ժամկետում ստեղծեցին հրաշալի ու իրական փաստերի վրա հիմնված աշխատություններ՝ կապված այս տարածաշրջանի պատմության հետ... Համաշխարհային հասարակայնությունը, ցավոք, չգիտեր այն մասին, որ այժմյան հայկական պետությունն առաջացել է ադրբեջանական պատմական հողում»⁹: Սրանից էլ փայլուն «աբսուրդի թատրոն»:

2. Հայկական վիմագրերի նենգափոխումները

Մեհփիլյան կեղծագրում առկա առավել տիպական նենգափոխումներից մեկը կապված է հայկական վիմագրերի հետ: Այսպես՝ հայտարարելով, որ «Հայերը նախքան XV դարի կեսերը Հարավային Կովկասում գրեթե չէին ապրում»¹⁰, մեհ-

7 Տե՛ս <http://www.Lragir.am> – 18.10.2010.

8 Ժամանակին Չեյդար Ալիևը Նախիջևանի Ինքնավար Հանրապետության 75-ամյակի անցկացման պետական հանձնաժողովի նիստում մի հրահանգ էլ է տվել. «Մենք պետք է հիմնարար աշխատություններ ստեղծենք և՛ Ադրբեջանի պատմության, և՛ Ադրբեջանի մաս կազմող Նախիջևանի պատմության մասին: Այդ աշխատություններով մենք պետք է ոչ միայն պատասխանենք առաջ քաշվող նկրտումներին, այլև ամբողջ աշխարհին ցույց տանք Ադրբեջանի հնագույն, հարուստ պատմությունն ու մշակույթը»: Տե՛ս Օ. Ա. Керимов III. В. Гасанов, Нахчыван-этнографический феномен.-Кавказ: археология и этнография. Международная научная конференция, материалы конференции, Баку, 2009, с. 302-303. Եվ իսկապես, շատ չանցած, Նախիջևանը հայաթափած ադրբեջանական վանդալներն ամբողջ աշխարհին ցույց տվեցին, թե ինչով են հարուստ Ադրբեջանի «հնագույն» պատմությունն ու մշակույթը: Նախիջևանի հայկական մշակութային այլ հուշարձանների հողին հավասարեցմամբ չհագեցնելով, նրանք 2005 թ. վերջնականապես ոչնչացրին Ջուղայի IX-XVII դարերի հայկական գեղաքանդակ խաչքարերը: Կանցնի որոշ ժամանակ, և կհայտնվի հերթական Մեհփիլ, որն անվարան կժխտի այդ խաչքարերի երբեմնի գոյությունը, իսկ դրանց փաստագրումները կհամարի հայկական կեղծիք: Սրանից էլ հեշտ ու հասարակ ադրբեջանականացում:

9 <http://ru.president.az/articles/2041>.

10 Рамиз Мехтиев, с. 17.

թիւյան խումբն անվարան պնդել է, թե իբր՝ «Ադրբեջանի քրիստոնէական ճարտարապետության հուշարձանների վրա ընդհուպ XI դարը հայալեզու վիճակագրություն չկա (եթե միայն ժամանակակից հայ քարգործները չեն հասցրել բռնագավթված (իմա՝ ազատագրված – Ա. Շ.) տարածքի հուշարձանների վրա «հին» հայկական արձանագրություններ փորագրել»¹¹:

Դիմենք փաստերին՝ եզրակացությունը թողնելով ընթերցողին: Բավական է միայն նշել, որ չնայած Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում այժմ բնակվող եկվոր թյուրքական տարրի կողմից հայկական այդ հնամենի հողի տեղաբնիկ բնակչության մշակութային ժառանգության ջանադիր ու բարբարոսական ոչնչացմանը, ճանաչված գիտնական Ա. Այվազյանն այդ տարածքում հայտնաբերել է VIII-XIX դարերի 5350-ից ավելի հայկական վիմագրեր¹²: Դրանցից մոտ 1000-ի փաստագրումները տեղի պետանվտանգության մարմինների աշխատակիցների կողմից 1981-1986 թվականներին Ա. Այվազյանից բռնագրավվել ու պատմության համար կորել են, իսկ 400-ը (դատելով գրչության ոճից՝ հնագույնները), խիստ եղծված լինելով, վերձանելի չեն: Այդուհանդերձ, պահպանվել են VIII-X դարերի՝ հստակ վերձանվող 6 հայկական արձանագրություններ: Դրանք են՝ Շոռոթի սուրբ Ստեփանոս վանքի խաչքարի արձանագրությունը (926 թ.), Նորաշենի սուրբ Աստվածածին եկեղեցու շինարարական արձանագրությունը (951 թ.)¹³, Նորակերտի Թարգմանչաց վանքի արձանագրությունները (730 և 951 թթ.)¹⁴, Աստապատի վանքի խաչքարի վիմագիրը (977 թ.)¹⁵ և Կուրիի սուրբ Նշան վանքի շինարարական արձանագրությունը (941 թ.)¹⁶: Այսպիսով, դրանց ժամանակագրական շրջանակներն ընդգրկում են 730-977 թվականները: Համեմատության համար նշենք, որ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում հայտնաբերվել է ընդամենը 289 արաբատառ և պարսկալեզու վիմագիր: Դրանցից հնագույնները (թվով 25) XIII-XIV դարերի՝ արաբատառ, իսկ մնացածները՝ XVIII-XIX դարերի պարսկալեզու արձանագրություններ են¹⁷:

Ուրեմն՝ Ռ. Սեթիևի ու նրա զինակիցների պատումների «հիմնավորման» համար են Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում 1930-1978 թթ. ոչնչացվել մոտ 30 հայկական ճարտարապետական հուշարձաններ, այդ թվում՝ 19 եկեղեցի, 3 տաճար, 2 գավիթ, զանգակատուն, հնագույն 3 գերեզմանատուն, իսկ 1998-2006 թթ.՝ շուրջ 27 հազար հայկական մեծ ու փոքր հուշարձան¹⁸: Բնականաբար, ոչնչացվել են նաև դրանց վրա եղած հայերեն վիմագիր արձանագրությունները՝ հայոց վաղնջական այդ տարածքի իսկական տերերի հայ լինելու մասին անհերքելի վկայությունները:

Այժմ անցնենք Արցախին, որի մասին հայտնի ճանապարհորդ ու հետազոտող Խ. Լինչը հետևյալն է գրել. «...անհիշելի ժամանակներից հայ ժողովրդով բնակեցված (այժմ) գաղութացված թաթար տարագիրների կողմից... Հայաստանի

11 Նույն տեղում, էջ 15:

12 Տե՛ս Արզամ Այվազյան, Նախիջևանի վիմագրական ժառանգությունը, հ. 2, Ե., 2010, էջ 7:

13 Տե՛ս Մույն տեղում, հ. Գ, Եր., 2008, էջ 64, 38:

14 Տե՛ս Մույն տեղում, հ. Գ, Եր., 2007, էջ 47, 49:

15 Տե՛ս Մույն տեղում, հ. Ե, Եր., 2009, էջ 46:

16 Տե՛ս Մույն տեղում, հ. 2, էջ 35:

17 Տե՛ս Մ. Неймат, Корпус эпиграфических памятников Азербайджана, т. III, Баку, 2001.

18 Տե՛ս Ս. М. Мурадян, Нагорный Карабах с древних времен до 1917 г. - "К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении", Ե., 1991, с. 49, Արզամ Այվազյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 7:

համար արտաքին ամուր պատվար է Կասպից ծովի կողմից»¹⁹: Չնայած հայկական այս տարածքում ևս վերջին դարերում հաստատված թյուրքական ու քրդական քոչվորները նախքան Արցախի մի մասի ազատագրումը հասցրել են ոչնչացնել հարյուրավոր հայկական կոթողներ ու դրանց վրա եղած հազարավոր վիմագրեր, պահպանվել են մինչև XI դարը թվագրվող 11 թվակիր արձանագրություններ, որոնցից 10-ը 1960-1964 թթ. փաստագրել է Հայաստանի և Ադրբեջանի մասնագետներից կազմված միացյալ գիտարշավի հայկական խումբը՝ ադրբեջանցի գործընկերների անդուլ հսկողությամբ: Դրանցից հնագույնը թվագրվում է 853-ով, իսկ նորագույնը՝ 1000-ով²⁰: Ընդհանուր առմամբ հայկական խումբը, զգալի բացթողումներով հանդերձ, փաստագրել է IX-XVIII դարերի 1071 հայերեն վիմագիր²¹, իսկ արաբատառ արձանագրություններ որոնող ադրբեջանական խումբը (ղեկավար՝ Մ. Նեյմատովա)՝ և ոչ մեկը:

Քարվաճառի ազատագրումից հետո տեղի պատմագավառագիտական թանգարանում գտնվեց այնտեղ պահվող 921 թվակիր արձանագրությամբ մի խաչքար²²:

Համեմատաբար վերջերս էլ արցախյան Տիգրանակերտում վաղ քրիստոնեական բազիլիկան պեղելիս ի հայտ եկավ հայերեն արձանագրություններով խեցեղեն՝ խաչագարդ սկահակ: Դրա հնագիտական միջավայրը, խաչի պատկերագարդան ոճը և վիմագրերի տառաձևերը վստահաբար թույլ են տալիս սկահակը թվագրելու V դ. վերջով – VII դ. սկզբով²³:

Եթե հայերն, ըստ մեծիկյան աճապարարների, մինչև XV դ. կեսերը Հարավային Կովկասում «գրեթե» չէին ապրում, որտեղ իբր՝ գերակշռում էր «թյուրքական բնակչությունը», ապա ինչո՞վ բացատրել մինչև XIII դարը այդ տարածքում, ի տարբերություն հայկականի, վիմագիր նյութով թյուրքական ներկայության որևէ կերպ փաստված չլինելը:

3. Սկզբնաղբյուրների անտեսումը կամ հորիմունը

Մեծիկյան նենգափոխողներին քաջածանոթ, բայց միտումնավոր կերպով անտեսված արաբական սկզբնաղբյուրները վկայում են, որ Արցախը հայաբնակ էր նաև արաբական տիրապետության շրջանում: Դա մասնավորապես երևում է Բաբեկի ապստամբության ճնշումից հետո՝ 837 թվականին, նրան ձերբակալելու մասին չեզոք սկզբնաղբյուրներում առկա նույնական հաղորդումներից: Ոչ պատահաբար դիմենք դրանց բունիաթովյան թարգմանությանը. համաձայն Ատ-Տաբարիի, Բաբեկի ապստամբությունը ճնշող արաբ զորավար ալ-Աֆշինը, լսելով ալ-Բազզ բերդից նրա փախուստի մասին, «Հայաստանի թագավորներին ու իշխաններին» գրել է հետևյալը. «Բաբեկը մի քանի մարդկանցով փախել է և հասել կիրճը, իսկ այնտեղից ուղղվել Հայաստանի կողմը և կանցնի ձեր կողքով»: Նա յուրաքանչյուրին հրամայեց պարեկել իր [անձնական] տեղամասը և ոչ մեկի բաց

19 X. Ф. Линч. Армения. Путевые очерки и этюды, т. I, Тифлис, 1910, с. 553.

20 Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ V, Եր., 1982, էջ 12, 13, 113, 163, 172, 173, 252, 254:

21 Տե՛ս նույն տեղում, էջ 5:

22 Տե՛ս Սամվել Կարապետյան, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Եր., 1999, էջ 52-53:

23 Տե՛ս Համլետ Պետրոսյան, Աղվանի ժամկոչյան, Հայերեն արձանագրություններով սկահակ Տիգրանակերտից (նախնական հաղորդում). - «Պատմա-բանասիրական հանդես», 2009, No 1, էջ 173:

չթողնել ճանապարհներով՝ առանց կանգնեցնելու և նրանց անձը պարզելու»²⁴:

Քիչ անց պատմիչը հավելում է. «Նա (Բաբելը - Ա. Շ.) պարենի մեծ կարիք ուներ, սակայն բոլոր հայ իշխանները (բատրիկները) սրաչք պաշտպանում էին իրենց մերձակա տիրույթներն ու իրենց ծայրամասերը և իրենց կայազորներին հրամայել էին որևէ մեկի թույլ չտալ թափանցելու դրանց մեջ»²⁵ : Այդ հայ իշխաններից մեկն էր Արցախ-Խաչենի տեր և ըստ ադ-Դինավարիի՝ մինչև Արաքս ձգվող իշխանություն ունեցող Սահլ (Սահակ) Սմբատյանը՝ Սահլ իբն Սուրբատը²⁶, որն էլ իր տիրույթներում ձերբակալեց Բյուզանդիա փախչող հայտնի հրոսակապետին²⁷: Այս իրողությունը միաձայն փաստում են ոչ միայն հայկական սկզբնաղբյուրները, այլև Աբու-լ-Ֆարաջը, ալ-Մաստուդին, ալ-Մակդիսին, ադ-Դինավարին, Իբն ալ-Ասիրը և Միքայել Ասորին²⁸: Ճիշտ է, առ-Տաբարին ու Իբն ալ-Ասիրը Սահլ Սմբատյանի ազգությունը հստակ չեն մատնանշում, բայց նրան հիշատակում են իբրև ալ-Աֆշինի հասցեատեր հայ իշխաններից (բատրիկներից) մեկի, որը ևս Բաբելին ձերբակալելու նպատակով հսկում էր իր տիրույթները: Ինչ վերաբերում է Աբու-լ-Ֆարաջին, ալ-Մաստուդիին և ալ-Մակդիսին, ապա նրանք արձանագրում են Սահլ Սմբատյանի «հայ բատրիկ» լինելը, իսկ Միքայել Ասորին, ըստ երևույթին՝ բուն հայկական անվամբ, նրան կոչում է «Սահակ Հայկազուն»²⁹: Աբու-լ-Ֆարաջն ընդգծում է նաև Սահլ Սմբատյանի հպատակների հայ լինելը³⁰:

Սահլ Սմբատյանին անդրադարձած հայ հեղինակներից հնագույնը՝ Մովսես Կաղանկատվացին, նախ՝ հայտնում է, որ Առանշահիկները հայկազն, այսինքն՝ հայ են, փաստում է Չարմիհր Առանշահիկի այդ տոհմին պատկանելը և շեշտում, որ Սահլ Սմբատյանը «Չարմիհրական տոհմն էր»³¹:

Ասվածի հաշվառմամբ՝ հարց է ծագում. եթե Հայոց Արևելից կողմերում, այսինքն՝ Ուտիքում ու Արցախում և նրանց մաս չկազմող Սյունիքում հայեր չէին ապրում, այնտեղ հայկական իշխանություններ ու դրանց տեր հայ իշխաններ չկային, ապա Հայաստանի ո՞ր մասի իշխաններն էին ալ-Աֆշինի հասցեատերերը: Գուցե՞ մեծթիկյան թեթև ձեռքով հայերին իբրև բնակության տեղ հատկաց-

24 Зия Буниятов, Азербайджан в VII-IX вв., Баку, 1965, հավելված, էջ 309:

25 Նույն տեղում, էջ 311:

26 Տե՛ս նույն տեղում, էջ 187:

27 Տե՛ս նույն տեղում, էջ 311-313:

28 Նույն տեղում, էջ 324, 325, 329, 332, «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հտ. 11, եր., 1981, էջ 142-144, Ժամանակագրություն Միխայելի Ասորուց պատրիարքի, Երուսաղեմ, 1871, էջ 365:

29 Նույն տեղում:

30 Տե՛ս Зия Буниятов, Азербайджан в VII-IX вв., հավելված, էջ 324:

31 Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Եր., 1983, էջ 172, 330: Ի դեպ, Ադրբեջանում Սահլ Սմբատյանի եթնիկ պատկանելության հարցում, մեղմ ասած, անեկղոսիկ մոտեցում է դրսևորվում: Բանն այն է, որ Ջ. Բունիաթովը հրաշալի իմանալով, որ Սահլ Սմբատյանն իրենից հետո ևս Արցախին տիրած հայկական իշխանատոհմների սկզբնավորողն է, 1960-ական թվականներին նրան թուրք էր հռչակել (Зия Буниятов, Обзор источников по истории Азербайджана, Баку, 1964, с. 10-11), ինչն Ադրբեջանում, բնականաբար, միահռուստ ընդունվել էր: Սակայն, 1980-ական թվականների վերջերին, Ղարաբաղյան շարժումն սկսվելուն պես, նա մեկնեց հայտարարվեց «դավաճան հայ»՝ վերածվելով հայ ժողովրդի, մասնավորապես «դավաճան» արցախահայության խորհրդանիշի: Ընդ որում, դա կատարվեց ադրբեջանական պատմակեղծարարության մեկ այլ «նվաճման» օգնությամբ: Դա մինչ այդ՝ իրանյան ծագում ունեցող ամբարտաբար, միոհուսու ընդունվել էր: Սակայն, 1980-ական թվականների վերջերի, այլև հերոս հռչակելու ածպարարությունն էր: Բաբելի անվամբ անգամ շրջան էր կոչվել: Եվ քանի որ այդ տմարդի արարածի սանձարձակությունները, մասնավորապես, իր իսկ աչքի առաջ մորը, կնոջն ու քրոջը պատվագրվելը (Зия Буниятов, Азербайджан в VII-IX вв., հավելված, էջ 329) չնոռացած Սահլ Սմբատյանը, նրան ձերբակալելով, արաբական իշխանություններին էր հանձնել, վերջինս հայտարարվեց դավաճան՝ ճիշտ այնպես, ինչպես իր ազատության համար ոտքի ելած արցախահայությունը: Իսկ այժմ, ինչպես հետևում է մեծթիկյան կեղծագրից, Սահլ Սմբատյանը քաղաքական նկատառումներով կրկին թուրք է դարձվել:

ված Վանա լճի շրջակա՞րքի³²: Սրանից էլ փայլուն «աբսուրդի թատրոն»:

Արցախի հայկականությունը «հերքելու» և իբր՝ աղվանական լինելի «ապացուցելու» համար մեհօրիսյան խումբը չի խորշել անգամ «սկզբնաղբյուրներ» հորինելուց: Մեհօրիսյան «գլուխգործոցում» կարդում ենք. «Եթե Արցախն Ալբանիայի հետ կապ չուներ, իսկ Գյանջասարի (իմա՝ Գանձասարի – Ա. Շ.) վանքը հիմնվել է որպես մաքուր «հայկական», ապա ինչո՞ւ է այդ տաճարը կառուցող իշխան Հասան-Ջալալին պետք եղել արձանագրություն թողնել, որում այն անվանված է **«Ալբանիայի աթոռանիստ տաճար»**՝ կանգնեցված **«իմ ալբան ժողովրդի համար** (ընդգծումը մերն է - Ա. Շ.)»³³: Հասան-Ջալալի ազգությանն ու թողած վիճազների բովանդակությանն անձանոթ ամեն ոք անկասկած կհուզվեր, տեսնելով, թե նա ինչպիսի հոգատարություն է դրսևորել իր «ալբան» ժողովրդի նկատմամբ: Թերևս մենք էլ հուզվեինք, եթե չլիներ մի «աննշան» մանրուք՝ **Հասան-Ջալալին վերագրված խոսքերի վկայակոչում-հղումը բացակայում է**: Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանզի Հասան-Ջալալը նման սրտատուչ արձանագրություն չի թողել: Իսկ Գանձասարի վանական համալիրի սուրբ Հովհաննես տաճարի հյուսիսային պատին թողած ընդարձակ շինարարական արձանագրության մեջ նա ընդամենը հայտնում է, որ իր հայր Վախթանգի կտակի համաձայն, մոր՝ Խորիշահի հետ 1216-1238 թթ. իրենց տոհմական գերեզմանատանը եկեղեցի են կառուցել («շինեսցուք եկեղեցի ի գերեզմանատանն հարց մերոց ի Գանձասար»), որի օծումը կատարվել է 1240 թ., Աղվանից կաթողիկոս Ներսեսի հայրապետության օրոք³⁴:

Իսկ թե ինչի՞ հիմամբ են մեհօրիսյան նենգափոխողները «Գանձասարը» փոխարինել «Գյանջասարով», գիտությանը հայտնի չէ: Ինչ վերաբերում է հայ Աղվանից եկեղեցու աթոռանիստին, ապա այն ինչպես այդ ժամանակ, այնպես էլ հետագայում, երկար տարիներ գտնվում էր Խամշի վանքում³⁵: Ընդ որում, հայոց ընդհանրական եկեղեցու կառույցում **հայ Աղվանից եկեղեցին թեմի կարգավիճակ է ունեցել 552 թվականից և ոչ թե նրան է ենթարկվել 1836 թ. ռուսական սինոդի կողմից, ինչպես մերկապարանոց հայտարարում է մեհօրիսյան խումբը**³⁶: Իր ամբողջ գոյության ընթացքում այն անվարան կիսել է մայր եկեղեցու բոլոր դժվարությունները և իրագործել հայ առաքելական եկեղեցու ազգապահպան գործառույթները:

Արցախն «աղվանաբնակ» տեսնող մեհօրիսյան պատմաշինարարները «մոռացել» են ևս մեկ անհերքելի սկզբնաղբյուր, որը չի կարողացել շրջանցել անգամ Ջ. Բուրնիսթրոմը, էլ չենք խոսում Մ. Հեյդարովի և Ս. Աշուրբեյլու մասին: Դա XIII դ. 20-ական թվականների կեսերին պարսկալեզու Անանուն հեղինակի ստեղծած պատմաաշխարհագրական բնույթի երկն է, որում նա շարադրել է իր աչքով տեսածը: Այն ռուսերեն հրատարակվել է երկիցս, նախ՝ Ն. Միկլուխ-Մակլայի, ապա Լ. Սմիռնովայի կողմից³⁷: Բառարանի կառուցվածք ունեցող այդ սկզբնաղբյուր-

32 Տե՛ս Рамиз Мехтиев, с. 17.

33 Նույն տեղում, էջ 13:

34 Տե՛ս «Դիվան հայ վիճագրության», պրակ V, էջ 38-40:

35 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Չայոց, Եր., 1961, էջ 201:

36 Տե՛ս Рамиз Мехтиев, с. 15.

37 Տե՛ս Н. Д. Миклухо-Маклай, Географическое сочинение XIII в. на персидском языке (новый источник по исторической географии Азербайджана и Армении). “Ученые записки Института востоковедения”, т. IX, М.-Л., 1954 (այսուհետև՝ Н. Д. Миклухо-Маклай), Аджайб ад Дунья (Чудеса мира). Критический текст, пер. с персидского, введение, комментарий и указатели Л. П. Смирновой, М., 1993 (այսուհետև՝ Л. П. Смирнова):

րում «խա» տառի տակ շարադրված է «Խաչեն» բառահոդվածը, ինչպես այդ ժամանակ հաճախ կոչվում էր Արցախը: Սանկտ-Պետերբուրգի արևելագիտության ինստիտուտում պահվող A-253 ձեռագրի 202 ք թերթի հիման վրա այս բառահոդվածի սկիզբը Ն. Միկլուխո-Մակլայը թարգմանել է հետևյալ կերպ. «Այդ նահանգը (վիլայեթ) դժվարամատչելի է, լեռների ու անտառների մեջ, պատկանում է Առանի մարզերին (ամալ), այնտեղ կան հայեր, Աբխազի (Վրաստանի) մարդիկ նրանց փառիշտահին թագավեր են անվանում, նրանք արխագների հետ խռովություններ են անում»³⁸:

Ժամանակին Ջ. Բունիաթովը Լ. Բաբայանին մեղադրել է «այնտեղ կան հայեր» հաղորդման իմաստն աղավաղելու մեջ³⁹, քանզի վերջինս «կան» բառը փոխարինել է «ապրում են»-ով⁴⁰: Սակայն այդ սրբագրման արդարացիությունն ապացուցեց նախ՝ Պ. Մուրադյանը, ապա՝ Ն. Սմիռնովան: Վերջինս այդ սկզբնաղբյուրի ձեռագրերի բաղդատմամբ քննվող հատվածում երկու էական շտկում է կատարել: Նա «այնտեղ կան հայեր»-ը սրբագրել է «[նրա բնակիչները] հայեր են», իսկ «նրանք արխագների հետ խռովություններ են անում»-ը՝ «նրանք արխագներին չեն ենթարկվում»⁴¹: Այսպիսով, XIII դ. առաջին քսանամյակում, այսինքն՝ Հասան-Ջալալի ժամանակներում, Արցախ-Խաչենում եղած պարսկալեզու Անանուն հեղինակը, որին հայամետության մեջ ոչ մի կերպ մեղադրել չես կարող, այն ոչ թե անգո աղվաններով, այլ հայերով է բնակեցված տեսել:

4. Արցախում աղվան իշխանների ու աղվանական իշխանությունների «հայտնաբերումը»

Մեծիկն ու իր օգնականները ոչ ավել, ոչ պակաս՝ XII-XIII դարերում Արցախում աղվանական իշխանություններ ու մշակութային հուշարձաններ և դրանք կառուցած աղվան իշխաններ են «հայտնաբերել»՝ հանվանե հիշատակելով ընթերցողին ծանոթ Հասան-Ջալալին և Հասան Մեծին (Կրոնավորյալին) ու նրա որդի Վախթանգին: Նրանք մերձավոր ազգականներ էին, տիրում էին համապատասխանաբար՝ Ներքին ու Վերին Խաչեններին և սերում էին Սահլ Սմբատյանից⁴²: Հիշյալ նշանավոր իշխանների հայ լինելն աներկբա վկայում են նաև նրանց անձամբ ճանաչած, բայց աղբյուրաբանական «պատմագիտության» կողմից աղվան հայտարարված հայ հեղինակները: Այսպես, օրինակ, Հասան Մեծի և նրա որդի Վախթանգի հայ իշխան լինելը շեշտում է Մխիթար Գոշը: Անդրադառնալով իր «Դատաստանագրքի» ձեռնարկման ժամանակին, նա մասնավորապես գրում է. «Չեռնարկութին մեզ յայսմ իրողութին եղև ի թուականութեանս Հայոց Ուր (1184)... յամս անիշխանութեան թագաւորութեան մերոյ ի վաղնջուց՝ ի ժամանակի մնացելոց սակաւ իշխանաց ի կողմանս Խաչենոյ, ընդ ժամանակս անուանելոյ

38 Н. Д. Миклухо-Маклай, с. 204.

39 Տե՛ս Յ. Մ. Бунятов, Государство атабеков Азербайджана (1136-1235), Баку, 1978, с. 112, пр. 320:

40 Տե՛ս Լ. Օ. Бабаян, Социально-экономическая и политическая история Армении в XIII-XIV вв., М., 1969, с. 22.

41 Լ. Ս. Смирнова, с. 199.

42 Մանրամասն տե՛ս Բ. Ա. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Եր., 1975, Ալեքսան Գալստյան, Խաչեն-Խոխանաբերդ ամրոցը և նրա իշխանատոհմը Թ-ԺԳ դարերում (քննական ակնարկ) - «Հանդէս անսօրեայ», 2010, թիվ 1-12, էջ 72-170:

Հասանայ, կրաւնաորեցելոյ, և որդոյ նորա Վախտանգայ, ի դղեկին, որ անուանի Հայթերք, գլխավորի այլոց իշխանաց»⁴³: Ավելին, կասկածից վեր է, որ հենց Վախթանգն է Արցախ-Խաչենի այն «թագավերը», որի մասին պատմում է վերը նշված Անանուն պարսիկ հեղինակը: Բացի այդ, նրան Մխիթար Գոշը երկիցս իշխանաց իշխան է կոչում⁴⁴, իսկ նրա կինը՝ Արզուխաթունը, ամուսնուն կոչում է «թագաւորագն»⁴⁵, քանզի իր հորից հետո Վախթանգն էր Խաչենի իշխանապետը:

Հակառակ մեթֆիկյան կեղծարարների պնդման, աղվան չէր նաև նրանց կողմից Աղվանքի թագավոր հռչակված Հասան-Ջալալը: Դա է փաստում թեկուզ Կիրակոս Գանձակեցու՝ հետևյալ վկայությունը. «...և զմեծ իշխանն Խաչենոյ և կողմանցն Արցախու Հասան, զոր Ջալալին կոչէին գգուանօք, այր աստուածապաշտ և երկիւղած, և պարկեշտ հայ ազգայ»⁴⁶: Վստահ կարող ենք ասել, որ Հասան-Ջալալին անձամբ ճանաչած Կիրակոս Գանձակեցու այս արժանահավատ ու ստույգ տեղեկությանը մեթֆիկյան խումբը կարող է հակադրել միայն իր վերոհիշյալ անհասցե «արձանագրությունը»:

Հայ էին Արցախ-Խաչենում գերիշխող երեք իշխանատոհմներից ոչ միայն նշվածները, այլև Դոփյանները, որոնք կրում էին հայ նշանավոր իշխանական տան՝ Ջաքարյանների դուստր Դոփի՝ իրենց տատի անունից առաջացած տոհմանունը: Այդ իշխանական տան սերունդ Սարգիս եպիսկոպոսը XIII դ. երկրորդ կեսից XIV դ. առաջին քառորդն ապրած իր հոր՝ հայտնի Գրիգոր իշխանի մասին խոսելիս ընդգծում է նրա «իշխան Հայոց» լինելը, ապա իրենց տոհմական տիրույթները թվարկելուց հետո հավելում, որ Դոփյանների իշխանությունն «ի մեր նախնեաց մնացեալ հայրենիք է»⁴⁷: Արցախ-Խաչենում XII դարում հայ իշխանների ու հայկական իշխանությունների առկայությունը, այն է՝ այդ երկրամասի հայկականությունը Մխիթար Գոշը փաստում է ևս մեկ անգամ: Նա իբրև ակամատես գրում է. «Ի ժամանակս բռնակալութեան Դեմացուց՝ յորում վաղ ուրեմն բարձեալ էր թագաւորութիւնն Հայոց ի սպառսպուռ, և անտերունչք շրջէին մնացորդք իշխանաց, որ ընդ բնաւ աշխարհս վարատեալք՝ ոչ հնազանդելով միմեանց, մանաւանդ այնոքիկ, որ բնակեալ էին յամուրս աշխարհին Արցախայ»⁴⁸:

Հայոց Արևելից կողմերի Աղվանք անվանումը լույ աշխարհագրական իմաստ ունենալը, Հայաստանի մաս կազմելն ու հայաբնակ լինելը քանիցս ուղղակիորեն փաստում է Մատթեոս Ուռհայեցին: XI դ. երկրորդ կեսին, XII դ. առաջին կեսում ապրած այդ հեղինակը խիստ արժեքավոր ու վստահելի տեղեկություններ է հաղորդում, քանի որ նրա «Ժամանակագրությունը» նվիրված է իր ապրած ու դրան անմիջականորեն նախորդած ժամանակաշրջանի (952-1136/1137 թթ.) իրադարձություններին: Անդրադառնալով Տաշիր-Չորագետի Կյուրիկյան թագավորության գահակալ Կյուրիկե Բ-ի օգնությամբ Շիրակի արքեպիսկոպոս Բարսեղին Ամենայն Հայոց կաթողիկոս օծելու հետ կապված անցքերին, Մատթեոս

43 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխատասիրութեամբ Ա. Ս. Մաթևոսյանի, Եր., 1988, էջ 242-243:

44 Տե՛ս «Բագմավէպ», 1848, էջ 117, 243, Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ Խ. Թորոսյանի, Եր., 1975, էջ 548, ծան. 32:

45 «Դիվան հայ վիմագրության», պրակ V, էջ 199:

46 Կիրակոս Գանձակեցի, էջ 358:

47 «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Եր., 1950, էջ 84:

48 «Հայոց նոր վկաները, (1155-1843)», աշխատասիրութեամբ Յ. Մանանդեանի և Դ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, էջ 23:

Ուռհայեցիին գրում է. «Ի յամի ՇԼ (1081 – Ա. Շ.) ... տէր Բարսեղ, յարուցեալ գնայր յաշխարհն Հայոց ի յԱղուան գաւառի՝ ի Լօռէ քաղաք առ թագաւորն Հայոց Կիրիկէ՝ որդի Անհողիհին Գաւթի»⁴⁹: Այնուհետև անդրադառնալով Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռին տիրանալու համար մղվող պայքարի արդյունքում երկրում առաջացած խռովահույզ վիճակին, նա նկատում է. «Արդ այս ամենայն խռովութեանցս և հանդէս բարկութեանս ոչ կարաց մտանել յաշխարհն Աղուանից, որ ասի՝ Խորին աշխարհ Հայոց»⁵⁰: Մատթեոս Ուռհայեցու այսօրինակ վկայությունները բերվածներով չեն սահմանափակվում⁵¹: Սակայն չերկարաբանելու համար բավարարվենք դրանցով՝ հավելելով միայն, որ աղբբեջանական «պատմագիտության» մեջ Մատթեոս Ուռհայեցիին ոչ պատահաբար անտեսված հեղինակ է:

Սա է պատմական իրողությունը, որը Մեհթիսն ու իր օգնականները տառացիորեն ոտնատակ են տվել՝ հույսը դնելով ընթերցողի անտեղյակության ու դյուրահավատության վրա:

5. Հայոց գիտամշակութային ժառանգության կողոպուտը

Աղբբեջանական «պատմագիտությունն» ի սկզբանե զբաղվել և այսօր էլ զբաղված է հայ ժողովրդի հարուստ գիտամշակութային ժառանգության կողոպուտով: Դա մասնավորապես դրսևորվում է ինչպես Հայոց Արևելից կողմերը՝ Ուտիքն ու Արցախը, այնպես էլ այդ նահանգներում ծնված կամ գործած հայ գիտության ու մշակույթի անխտիր բոլոր ականավոր գործիչներին աղվան հայտարարելու և նրանց ստեղծագործական ժառանգության սեփականման տեսքով: Դե ինչ, եթե բարձրաժեք մշակույթ չունենալու պատճառով տառապում են թերարժեքության բարդույթով, ապա մնում է այն «արարել»՝ ուրիշները յուրացնելով: Եվ եթե դա ժամանակին արվում էր սրով, ապա այժմ՝ գրչով: Ասվածի հաշվառմամբ պետք է «գոհ լինենք», որ մեհթիսյան կեղծարարները բավարարվել են միայն Մովսես Կաղանկատվացիով և Կիրակոս Գանձակեցիով:

Հայ միջնադարյան գիտամշակութային ժառանգությանը փոքրիշատե ծանոթ ամեն ոք գիտի, որ այն արարողները հնարավորինս խուսափում էին իրենց կենսագրականին անդրադառնալուց կամ էլ ազգությունը նշելուց: Դա բացատրվում է նրանով, որ համաձայն ազգության միջնադարյան ըմբռնման՝ էթնիկ պատկանելությունը ստորադասվում էր դավանանքին, ինչի վառ վկայությունն է ազգության սահմանումը Գրիգոր Տաթևացու կողմից⁵²: Այս առումով Մովսես Կաղանկատվացին բացառություն չէ, ուստի բավարարվել է միայն իր ծննդավայրը մատնանշելով «գեղջն մեծի կողմանն Կաղանկատուաց, որ է ի նմին յՈւտի գաւառի, յորմէ և ես»⁵³: Հենց սա է, ի շարս աղբբեջանական այլ կեղծարարների, մեհթիսյան խմբին «հիմք» ծառայել այս նշանավոր հայ պատմիչին «աղվան» դարձնելու համար: Այժմ տեսնենք, թե որքանով էր Ուտիքն «աղվանական» և «աղվաններով» էր արդյոք բնակեցված:

49 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 221:

50 Նույն տեղում, էջ 23:

51 Տե՛ս նույն տեղում, էջ 3-4, 17, 80-82, 231:

52 Տե՛ս Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 552:

53 Մովսես Կաղանկատուացի, էջ 137:

Բանն այն է, որ 428 թվականին Արշակունյաց հայոց թագավորությունը մարզպանության վերածելուց հետո Սասանյանները Մեծ Հայքի մեջ մտնող Ուտիք նահանգի մի մասը, այդ թվում՝ նրա Առան-Ռոտ գավառը, միացրին այսպես կոչված՝ Աղվանից մարզպանությանը, որը պարսիկները կոչում էին Առանի, այսինքն՝ դաշտի մարզպանություն: Որոշ ժամանակ անց՝ V դ. երկրորդ կեսին, երբ Աղվանից մարզպանի նստավայրը դարձավ Առան-Ռոտ գավառում կառուցված հայկական Պարտավ քաղաքը, մարզպանի համար տնտեսական հիմք ստեղծելու նպատակով Առան-Ռոտից առանձնացվեց մի հատված, որն ստացավ Ուտի-Առանձնակ անվանումը և կազմեց Ուտիքի ութերորդ գավառը: Հենց այստեղ՝ Պարտավից արևմուտք, Թարթառ գետի հովտում էր գտնվում Մովսես Կաղանկատվացու ծննդավայր Կաղանկատույք գյուղը:

Ուտիքն ի սկզբանե Երվանդականների հայկական պետությանը մաս կազմելու և հայաբնակ լինելու իրողությունը փաստում է պատմահայր Մովսես Խորենացին: Նա մեջ է բերում իրական հիմքեր ունեցող մի գրույց, ըստ որի՝ «հատուած գնացեալ Վարդգէս մանուկն (իմա՝ քաջ գորականը – Ա. Շ.) ի Տուհաց գաւառէն... կռել կոփել գրումն Երուանդայ արքայի»⁵⁴ և անմիջապես մեկնաբանում. «Այս Երուանդ՝ առաջինն է, սակաւակեացն, որ ի Հայկազանց, գորոյ գրոյրն կին առեալ Վարդգէսի՝ շինեաց գաւանս զայս (իմա՝ Վարդգէսավանը=Վաղարշապատը - Ա. Շ.)»⁵⁵: Տուհաց գավառն Ուտիքի Տուս-քուստակ=Տավուս, Տավուշ գավառն է: Դրանից հետևում է, որ Ուտիքի տարածքն ի սկզբանե՝ Ք. ա. VI դ. սկզբներից, եղել է Երվանդ Սակավակյացի ստեղծած Երվանդական հայոց թագավորության կազմի մեջ՝ լինելով հայաբնակ և հայախոս:

Անդրադառնալով Արտաշեսյան հարստության հիմնադիր Արտաշես Ա-ի կողմից Երվանդական արքայատոհմի վերջին ներկայացուցիչ Երվանդ Գ Վերջինի գահազրկման հետ կապված անցքերին՝ Մովսես Խորենացին պատմում է, որ իր դայակ Սմբատի հետ գործով Արտաշեսի Հայաստան մտնելու լուրը Երվանդն առնում է «յՈւտեացոց գաւառին»⁵⁶, որտեղ ձմեռել էր, ինչը հետևում է Մովսես Խորենացու «Եւ էին ատուրք գարնայնոյ»⁵⁷ հաղորդումից: Նրանց դիմագրավելու համար գործ հավաքելու նպատակով Երվանդը «եթող անդէն (Ուտիքում -Ա. Շ.) զբազումս ի նախարարացն կողմնապահս, և ինքն գնաց ի քաղաքն իւր (Երվանդաշատ - Ա. Շ.) փութանակի»⁵⁸: Սմբատը, որին հայտնի էր, թե Երվանդը որտեղ է ձմեռում, իր հերթին, «հանդերձ մանկամբն Արտաշիսի աճապարէր հասանել ի սահմանս Ուտէացոց: Ընդ առաջ նորա ելին զօրք այնր կողմանն, նա և նախարարքն զորս եթող Երուանդ: Չայն իբրև լուան այլ նախարարքն Հայոց՝ լուծանէին լքանէին և գատչել Երուանդայ խորհէին»⁵⁹:

Այսպիսով, Պատմահայրը հստակորեն մատնանշում է, որ Ուտիքն ի սկզբանե մտել է հայոց պետության կազմի մեջ, եղել Երվանդականների ձմեռանոցը և հայաբնակ լինելով՝ կառավարվել է հայ նախարարների կողմից: Պատմահայրը մեկ այլ առիթով հայտնում է, որ հայոց լեզվի եզերքում, այսինքն՝ Ուտիքում և Արցախում, փաստորեն՝ մինչև Կուր գետ, բնակչությունը եղել է հայկական ու

54 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Եր., 1991, էջ 169:

55 Նույն տեղում:

56 Նույն տեղում, էջ 199:

57 Նույն տեղում:

58 Նույն տեղում:

59 Նույն տեղում, էջ 170:

հայախոս⁶⁰:

Ուտիքն ավանդաբար Հայոց թագավորների ձմեռանոց լինելը վկայում է նաև Ագաթանգեղոսը, նշելով, որ Անակ Պարթևը Խոսրով Ա-ին հանդիպել է «յՈւտի գաւառի, ի Խաղխաղ քաղաքի, ի ձմեռոցս արքայութեանն Հայոց»⁶¹: Իսկ եթե պատմության աղբրեջանական կեղծարարներին թվում է, թե Ուտի-Առանձնակի տեղաբնիկ հայերը, այդ թվում՝ Մովսես Կաղանկատվացու նախնիները, այն Աղվանից մարզպանության մեջ մտցվելուց հետո, ասես կախարդական փայտիկի օգնությամբ, աղվան (իրենց հասկացությամբ՝ աղբրեջանցի) են դարձել, ապա չարաչար սխալվում են: Նրանք ուզեն, թե չուզեն, Մովսես Կաղանկատվացին հայ է ոչ միայն ազգությամբ, այլև մայր հայրենիքի ու ժողովրդի նկատմամբ տածած սիրով և մայրենի լեզվի ու պատմության փայլուն իմացությամբ⁶²: Եվ, վերջապես, այս պատմիչին հայ գիտի նրան «Կաղանկատվացի» կոչած Կիրակոս Գանձակեցին՝ հայ մատենագրությանը քաջածանոթ մի անձնավորություն: Անդրադառնալով իրեն նախորդած հայ պատմիչներին, նա դրանց շարքում հիշատակում է նաև Մովսես Կաղանկատվացուն. «Իսկ հայոց ազգի պատմագիրք յուրվք ցուցին աշխատութիւն... Եւ Մովսէս Կաղանկատուացի, պատմագիր Աղուանից»⁶³: Այսպիսով, նա Մովսես Կաղանկատվացուն համարում է Հայաստանի Աղվանից, այսինքն՝ դաշտի երկրամասի հայ պատմագիր: Ինչպես Թովմա Արծրունին է գրել Վասպուրականի, իսկ Ստեփանոս Օրբելյանը՝ Սյունիքի պատմությունը, այնպես էլ Մովսես Կաղանկատվացին շարահարել է աշխարհագրորեն հայոց Աղվանք կոչված՝ Հայոց Արևելից կողմերի պատմությունը:

Ի տարբերություն Մովսես Կաղանկատվացու, Կիրակոս Գանձակեցին ասես իր «աղվանացվելը» կանխազգալով՝ բազմիցս հիշատակել է, որ հայ է: Եվ դա այն դեպքում, երբ թվում է, թե դրա կարիքն ամենևին չի եղել, քանզի նրա կենսագրությունն ու ստեղծագործական ժառանգությունը ներթոմված են մայր ժողովրդի, հայրենիքի ու հավատքի նկատմամբ անմնացորդ սիրով: Մեթիսկյան կեղծիքը ջրի երես հանելու համար բավական է վկայակոչել թեկուզ Կիրակոս Գանձակեցու գլխավոր երկի՝ «Հայոց պատմության» առաջաբանը, որում նա հետևողականորեն օգտագործում է «Հայոց աշխարհիս», «աշխարհիս Հայոց», «հայոց ազգիս», «ազգիս հայոց» արտահայտությունները⁶⁴: Պատմիչն այդ արտահայտություններն իր երկում օգտագործում է մինչև վերջ և անգամ դրա մի գլխի վերնագրում՝ «Վասն աւերածոյ աշխարհիս Հայոց և Վրաց ի նոյն գօրաց»⁶⁵:

Բացի այդ, նկարագրելով իր «Հայոց պատմությունը» սկսելու ժամանակ՝ 1241 թվականին, մոնղոլական տիրապետության պատճառով Հայաստանին և հայ ժողովրդին բաժին ընկած ծանր կացությունը, Կիրակոս Գանձակեցին նախ շեշտել է՝ «զի գոր գուշակեց այրն աստուծոյ սուրբն Ներսէս վասն ազգին նետողաց և աւերման աշխարհիս Հայոց, յայժմ կատարեցաւ յազգէ, որ թաթարն

60 Տե՛ս նույն տեղում, էջ 112-113:

61 Ագաթանգեղոյ Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1909, էջ 21:

62 Ավելի մանրամասն տե՛ս Ա. Ս. Мнацаканян, П. Севак, По поводу книги З. Буниятова «Азербайджан в VII-IX вв. - «Պատմա-բանասիրական հանդես», 1967, No 1, А. А. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ер., 1987, Г. С. Свезян, История страны Алуанк (с древнейших времен до VIII в.), Е., 2009, և ուրիշներ:

63 Կիրակոս Գանձակեցի, էջ 6-7:

64 Տե՛ս նույն տեղում, էջ 6, 7, 9:

65 Նույն տեղում, էջ 237:

կոչի»⁶⁶: Ապա կսկիծով նկատել է. «Բայց յուրաքանչիւր որ յառաջին աշխատասիրացն (իրեն նախորդած հայ պատմիչների - Ա. Շ.) եզիտ տեղի ինչ բուռն հարկանելոյ, կամ թագաւոր երևելի և կամ նահապետութիւնք ազգաց յայտնի: Իսկ մեր յայսմ յամենայն թափուր եղեալ. զի թագաւորութիւնն վաղ ուրեմն բարձեալ՝ Արշակունին և Բագրատունին և իշխանք ոչ ուրեք երևեալ Հայկազնի, բայց թէ ուրեք ուրեք դողեալք և թաքուցեալք յօտար աշխարհի»⁶⁷: Մի՞թե աղվան հեղինակն իրեն հայ կիսամարեր, իսկ Հայոց աշխարհն իր հայրենիքը, ցավ հայտնելով հայ Արշակունյաց և Բագրատունյաց թագավորությունների անկման, հայ ժողովրդի ողբալի վիճակի և հայկազն իշխանների՝ օտար աշխարհում թաքնվելու համար:

Կիրակոս Գանձակեցուն աղվան հռչակելու հիմքը ևս նրա հորինված «ծննդավայրն» է. իբր՝ նա ծնվել է Գանձակ քաղաքում: Իրականում այս մակամունը պատմիչին սխալմամբ տվել է նրա «Հայոց պատմության» (Մոսկվա, 1858) առաջին հրատարակիչ Վ. Տեր-Գևորգյան-Հովհաննիսյանը, ինչը և քաղաքացիություն է ստացել: Կիրակոս Գանձակեցին գրում է, որ ինքը «յաշխարհէն Գանձակայ»⁶⁸ է, այսինքն՝ Արցախի Փառիսոս գավառից է և իր երկում ոչ մի քաղաքի ու նրա բնակիչների մասին այնպիսի արգահատանքով չի խոսում, որքան Գանձակի⁶⁹: Նա բավարարվել է միայն իր անունը Կիրակոս հիշատակելով⁷⁰:

Ի դեպ, սկսած 1930-ական թվականներից, աղբրեջանցիների անվանադիր Ի. Ստալինի կամքով «գտարյուն աղբրեջանցի» է հայտարարվել նաև պարսկական պոեզիայի գագաթներից մեկը՝ Նիզամին⁷¹: Դա Աղբրեջանում ոչ միայն ընդունվել է, այլև այժմ իբրև անառարկելի ճշմարտություն է ներկայացվում, և Նիզամին դիտվում է իբրև աղբրեջանական «հնագույն մշակույթի» խորհրդանիշ: Եթե թուրքերին ուխտադրուժ, խոստումնազանց, կողոպտիչ ու այլ բացասական բնորոշումներով բնութագրող, իր դիշադուհի կնոջից ունեցած որդուն «իմ թուրքի գավակ» անվանող, պարսիկ հայր ու քրդուհի մայր ունեցած և պարսկերեն ստեղծագործած բանաստեղծը⁷² աղբրեջանցի (թուրք) է համարվում, ապա Գանձակն ու գանձակցիներին ատող Կիրակոս Գանձակեցին ինչու՞ չպիտի «աղվան» հռչակվի: Ի դեպ, նույն «հաջողությամբ» աղբրեջանցի են հռչակվել նաև Խաթանին ու Ֆալաքին:

6. «Աղբրեջան» քաղաքական ու աշխարհագրական հասկացությունների նենգափոխումը

Մեծիկն ու իր օգնականները բացահայտորեն ստում են՝ պնդելով, թե իբր՝ Գարաբաղն «Ալբանական ինքնուրույն թագավորության անկումից հետո «Աղբրեջան» աշխարհագրական ու քաղաքական հասկացության մաս լինելով, մտել է

66 Նույն տեղում, էջ 9:

67 Նույն տեղում:

68 Նույն տեղում, էջ 116:

69 Տես նույն տեղում, էջ 135:

70 Տես նույն տեղում, էջ 10, 249, 339: Տես նաև Կ. Ա. Мелик-Оганджаниян, Историко-литературная концепция З. Бунятова. — “Вестник архивов Армении”, 1968, No 2, сс. 182-183, 188-189.

71 Այս մասին մանրամասն տես Արմանուշ Կոզմոյան, Մշակութային կողոպուտ կամ պատասխան Արիֆ Յաջիկին. - «Գրական թերթ», 23 նոյեմբերի 1989:

72 Տես նույն տեղում:

Սաջյանների աղբրեջանական պետության մեջ, X դ. Սալարյանների պետության մեջ, XI-XII դդ. եղել է Շաղաղյանների պետության մասը, XII-XIII դդ. Ղարաբաղը (Արցախը – Ա. Շ.) կազմել է Աթաբեկներ-Իլդենիզյանների (իմա՝ Ելտկուզյանների – Ա. Շ.) աղբրեջանական պետության մասը»⁷³: Այս տողերում որևէ ճիշտ միտք փնտրելը հավասարազոր է մութ սենյակում սև կատու որոնելուն: Իրականում «Աղբրեջան» և «Ղարաբաղ» աշխարհագրական հասկացություններն ի հայտ են եկել Աղվանից թագավորության անկումից բազում դարեր անց⁷⁴: Ինչ վերաբերում է «Աղբրեջան» քաղաքական հասկացությանը, ապա այն մոզմովել է 1918 թ. մայիսին:

Հայաստանում 450-451 թթ. տեղի ունեցած հակապարսկական հուժկու ապստամբությունից հետո, Հայոց մարզպանությունը թուլացնելու միտումով Սասանյաններն Արցախը ևս նրանից անջատելով, մտցրել են ոչ թե Աղվանից պետության, այլ մարզպանության մեջ: Բացի այդ, Սաջյաններն ու Սալարյանները ոչ թե աղբրեջանական, այլ «իրանական տարրի պետական կազմավորումներ էին: Շաղաղյանները քուրդ էին»⁷⁵: Արցախը XII-XIII դարերում, այսինքն՝ 200 տարի «Աթաբեկներ-Իլդենիզյանների աղբրեջանական պետության» մաս չի կազմել, քանի որ նախ՝ այն աղբրեջանական չի եղել, այլ սելջուկյան և ապա, կիսանկախ կամ անկախ գոյատևել է ընդամենը 89 տարի՝ 1139-1225 թթ.: Արցախը, չնայած Ելտկուզյանների համառ ջանքերին, նրանց այդպես էլ չի ենթարկվել: Դա փաստում է նաև վերոհիշյալ պարսկալեզու Անանուն հեղինակը՝ հրճվանքով պատմելով հայկական այդ երկրամասի վրա ելտկուզյան հրոսակների 1214/15 թ. կատարած հերթական արշավանքի մասին, բայց մինչ այդ շեշտելով, որ խաչենցիները (արցախցիները) արխագներին (վրացիներին) չեն ենթարկվում⁷⁶: Եթե Արցախը Ելտկուզյաններին ենթարկվեր, ապա պարսկալեզու Անանուն հեղինակը ինչու՞ պետք է շեշտեր խաչենցիների՝ վրացիներին նույնպես չենթարկվելու փաստը:

7. Տեղանվանագիտական ասպատակությունները

Մեհթիսյան «տեղանվանագետները» վրդովված պնդում են, որ «նախկին աղբրեջանական (հենց աղբրեջանական!) «Իրևանի խանության» հարյուրավոր տեղանուններ խորհրդային տարիներին վերանվանվել են հայկական անուններով, նպատակ ունենալով ոչնչացնել այդ հողերում բնակված աղբրեջանական թյուրքերի հետքերը: Տեղանուններ, որոնք մեր լեզվում նշանակություն ունեն, իսկ հայերենում ոչինչ չեն նշանակում»⁷⁷:

Նախ՝ քաջ հայտնի է, որ ցանկացած վաչկատուն, այդ թվում՝ թյուրքը, մշտական բնակավայր չունի: Քոչվորի բնակատեղին այնտեղ է, որտեղ նրա գոյության կարևոր միջոց ոչխարի արոտավայրն է: Եթե այդպես չլիներ, ապա Մեհթիսը եթե, իրոք, աղբրեջանական թյուրք է, ինչը խիստ կասկածելի է, այսօր կապրեր ոչ թե Բաքվում, այլ Թուրանում, ոչխարներ կարածեցներ և ձեռքի հետ էլ

73 Рамиз Мехтиев, с. 15.

74 Ղարաբաղ տեղանունը XIV դարում առաջացած լինելու մասին տես “К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении”, с. 38.

75 Բ. Յ. Չարությունյան, էջ 17:

76 Տե՛ս Լ. Ս. Սмирнова, с. 199.

77 Рамиз Мехтиев, с. 11.

կգբաղվեր ոչ թե հայ ժողովրդի պատմության ու մշակույթի, այլ հարևան ցեղի ոչխարների ու ձիերի կողոպուտով: Դա իմիջիալոց: Բացի այդ, հայկական բնակավայրերի թյուրքական անվանումները բնավ դրանց անպայման թյուրքաբնակ լինելու գրավականը չեն: Մակայն քիչ չէին դեպքերը, երբ եկվող թյուրքերը, հայկական բնակավայրի բնակչությանը տեղահանելով, իսկ ավելի հաճախ ոչնչացնելով, այն ծառայեցնում էին իբրև ձմեռանոց կամ ամառանոց և, ի վերջո, հաստատվում այդտեղ: Հայկական տարածքների զավթմանը հետևում էր դրանց անվանումների թյուրքացում-յուրացումը: Դա հաճախ կատարվում էր կա՛ն տեղանունների սխալ թարգմանությամբ, կա՛ն տառադարձում-աղավաղմամբ, կա՛ն էլ միայն քոչվորի պարզունակ մտածողությանը հարիր ծիծաղաշարժ որևէ վերանվանակոչմամբ: Ասվածի ապացույցներից է Բաբկեն Հարությունյանի վկայաբերած՝ Դոնգուզու=Խոզիշեն վերանվանված հայկական Դոնկույս=Գետակողմ գյուղի օրինակը⁷⁸, ինչը թյուրքացված հայկական տեղանունների ծիծաղաշարժ վերանվանման վկայություններից մեկն է: Ինչ վերաբերում է հայկական հողերում ապրած աղբբեջանական թյուրքերի հետքերը վերացնելու հետ կապված՝ մեհթիլյան կեղծարարների և վերջերս Իլիամ Ալիևի հայտնած մտավախությանը⁷⁹, ապա նրանք կարող են հանգիստ լինել. թյուրքերն, ի թիվս այլ ոճրագործությունների, հայոց այնքան ճարտարապետական կոթողներ են ոչնչացրել կամ ավերել, որ դրանք անհնար է վերականգնել, այսինքն՝ թյուրքական հետքերը ջնջել:

Բերենք մեհթիլյան «տեղանվանագետների» քվարկած «աղբբեջանական տեղանուններից» Դարաքիլիսայի (Միսիան) օրինակը: Այս տեղանվան գոյությունը թյուրքերի հայտնվելուց դարեր առաջ փաստել են հայկական սկզբնաղբբյուրները: Եվ քանի որ Մեհթիլեն ու իր օգնականները հասկանալի պատճառներով դրանց չեն վստահում, դիմենք վրացական սկզբնաղբբյուրին: Անդրադառնալով Ջաքարյանների 1207 թ. Անիից Արդաքիլ կատարած արշավանքին, վրաց պատմիչը գրում է. «Հավաքվեցին Անիում ու շարժվեցին դեպի Արդաքիլ: Անցան Գեղարքունը (իմա՝ Գեղարքունիքը – Ա. Շ.) և իջան Միսիան, անցան Խուդափրիդի (իմա՝ Խուդափրիդի – Ա. Շ.) կամրջով և ուղղվեցին Արդաքիլ»⁸⁰: Այստեղ խոսքը վերաբերում է մեհթիլյան «տեղանվանագետների» վրդովմունքը հարուցած Դարաքիլիսա-Միսիանին, քանզի Անիից Գեղարքունիքի վրայով և Խուդափրիդի կամրջով Արդաքիլ կարելի է գնալ միայն Միսիանով: Նաև նկատենք, որ պարսկա-արաբական աղբբյուրներում այդ նահանգը հիշատակվում է Միսաջան, Միսահան, բայց ոչ երբեք թյուրքադիր՝ Դարաքիլիսա (Սև եկեղեցի) անվամբ: Իսկ ընդհանրապես թափառական թյուրքին հանդիպած «դարաքիլիսաների» շարքն այնքան երկար է, որ դրանց քվարկումն անգամ անիմաստ է, որովհետև քոչվորականը նկատել ու արձանագրել է ոչ թե եկեղեցու անունը, այլ սոսկ նրա քարերի գույնը: Նման իմացական դալտոնիզմը լուրջ վկայում էր նրա եկվորության ու տվյալ մշակութային միջավայրին օտար լինելու մասին:

Մի քանի խոսք էլ նվիրենք իբր՝ Նոյի ժամանակների հետ կապվող՝ «հին հայկական» տեղանունների մասին կեղծ տարեգրություններ հնարելու շուրջ

78 Տե՛ս Բ. Յ. Հարությունյան, էջ 11:

79 Տե՛ս <http://ru.president.az/articles/2041>.

80 Մանրամասն տե՛ս Բ. Կ. Կիկնաձե, *Очерки по источниковедению истории Грузии, Тбилиси, 1980, с. 74-75.*

մեհթիւյան «ամբաստանութեանը»⁸¹: Ով ով, բայց մեհթիւյան կեղծարարները, եթե ամոթի կաթիլ ունենան, ապա Նոյի մասին ոչ միայն չպետք է խոսեն, այլև այդ անունը լսելիս՝ կարմրեն: Որովհետև դեռ 1980-ական թվականներին աղբբեջանական «նոյագետներն» ամենայն լրջությամբ պնդում էին Նոյի գտարյուն աղբբեջանցի լինելը, իսկ նրա տապանն ի սկզբանե՝ թյուրքաբնակ Նախիջևանում իջնելը: Ինչ վերաբերում է Լվովն Առյուծ վերանվանելու շուրջ մեհթիւյան տափակ հումորին, ապա ինչպես արդեն տեսանք, դա խելքին ավելի մոտ կլիներ, քան Գոնկույսը՝ Դոնդուզլու վերանվանելը:

7. Ուտիքի ուշ միջնադարյան պատմության նենգափոխումը

Իսկ այժմ անդրադառնանք ներկայիս Աղբբեջանի Հանրապետության Ղազախի, Թովուզի ու Գետաբեկի շրջանների, այն է՝ Մեծ Հայքի Ուտիք նահանգի Ադուե (Ադսու), Տավուշ և Գարդման գավառների թյուրք-աղբբեջանցիների «տեղաբնիկությունը»: Այդ «տեղաբնիկներն» իրականում, ըստ թուրքական և այլ սկզբնաղբբյուրների, պատկանում են Թուրանից Սեբաստիայի շրջակայք հասած, իսկ այնտեղից Շիրազ տեղափոխված թյուրք-ղզլբաշական ղազախլու (ղազախլար, ղազախի) և շամսադինլու ցեղերին: Դրանց վերոհիշյալ հայկական գավառներում վերաբնակեցրել է Սեֆյան շահ Իսմայիլը XVI դ. առաջին քառորդում: Հայկական տարածքներում բնակեցնելով այդ և մի շարք այլ ղզլբաշական շիա ցեղերի, նա նպատակ ուներ օսմանյան սուննի թուրքերի դեմ մղվող պայքարում հուսալի փիկունք ստեղծել: Նույն խնդրին էր հետամուտ նաև Ղազախի և Շամշադինի խանությունների ստեղծումը Իսմայիլի հաջորդ Թահմազ I-ի կողմից: Սակայն դա Սեֆյաններին չհաջողվեց, քանզի այդ ցեղերին հետաքրքրում էր միայն ու միայն սեփական շահը: Երբ հարկ էր լինում, նրանք փոխում էին տիրուջը:

Ադուե (Ադսուր), Տավուշն ու Գարդմանն իբրև ժառանգական ուլքա ստանալուց հետո ղազախլուներն ու շամսադինլուները ձեռնամուխ եղան դրանց անվանումների թյուրքացմանը: Ադուե վերանվանվեց Ղազախլու, իսկ Տավուշն ու Գարդմանը՝ Շամսադինլու: Այդ գավառների հայկական բուն տեղանուններն աննշան բացառություններով թյուրքացվեցին: Մեծ չափեր ընդունեցին տեղաբնիկ հայերի տնտեսական կեղեքումն ու արտամղումը, ինչպես նաև բռնի մահմեդականացմամբ՝ թյուրքացումը կամ պարզապես ոչնչացումը: Արդյունքում հայ բնակչության թվաքանակն աղետալի նվազեց, իսկ եկվորներինն աճեց: Ասվածը հաստատվում է ժամանակի ոչ միայն հայկական, այլև օտար սկզբնաղբբյուրներով: Այսպես, օրինակ՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Տավուշ գյուղում («ի յերկիրս Տայուշ, ի գեաղս, որ կոչի Թաուշ») 1645 թ. արտագրված ավետարանի հիշատակարանում Եսայի գրիչը նշում է. «բռնացաւ անարեւնութեան չարիք ի վերայ մեր ի հենե Պարսից, լուծ ծառայութեան նոցա հարկանելով և տանջելով սոխպեն դարձուցանել ի մոլոր յարեւնս իրեանց»⁸²: Եսայի գրչի այս խոսքերի հաստատումն է Ղազախի, Թովուզի ու Գետաբեկի շրջաններում «քիլինչ» (այսինքն՝ սրով) բռնի մահմեդականացվածների մեծ թիվը:

81 Стен Рамиз Мехтиев, с. 11.

82 Ժ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (1641-1660 թթ.), հ. Գ, կազմեց Վազգեն Հակոբյան, Եր., 1984, էջ 182:

Հետագայում՝ XVIII դ. երկրորդ կեսին, Ղազախի ու Շամշադինի խանությունները վասալական կախման մեջ ընկան Քարթլիի ու Կախեթի թագավոր Հերակլ II-ից, իսկ 1801 թ. Արևելյան Վրաստանի հետ միասին միացվեցին Ռուսաստանյան կայսրությանը⁸³: Ղա կանխեց այդ խանությունների լիակատար հայաթափումը, ինչի պայացույցն են Հերակլ II-ի հրամանով 1770 թ. անցկացված վիճակագրության տվյալները: 1770 թ. ապրիլի 5-ով թվագրված մի վիճակագրական պաշտոնական փաստաթղթում կարդում ենք. «Ղազախը մի ամբողջ խանություն է, և այստեղի բնակիչներից շատերը ցիրուցան են եղել ուրիշ երկրներում, և այժմ Ղազախում աղբրեջանցիները (թյուրքերը-Ա.Շ.) 3000 են և հայերը 1200 [ծուխ]: Շամշադինը մի ամբողջ խանություն է. այստեղ ապրում են աղբրեջանցիներ (թյուրքեր-Ա.Շ.) 2200, հայեր ևս կան՝ 1200 [ծուխ]»⁸⁴: Նմանատիպ այլ սկզբնաղբյուրները շատ են, սակայն բերվածներն էլ բավարար են՝ ի ցույց դնելու պատմական իրողությունը:

8. Վերջապես ովքե՞ր են աղբրեջանցիները

Մեիքինն ու նրա օգնականներն արծարծել են նաև աղբրեջանական ժողովրդի կազմավորման հարցը: Ի սեր արդարության պետք է խոստովանենք, որ այդ հարցում պատմության նենգափոխման աղբրեջանական չափանիշներով իրականացվող կեղծարարությունը «չափավոր» է, որովհետև «ժողովուրդ» և «ազգ» հասկացությունների կանխամտածված նույնացմամբ՝ աղբրեջանցիների «կենսաբանական» նախնիներին «համեստորեն» ընդամենը 1000 տարվա ժառանգություն է վերագրվել⁸⁵: Համեմատության համար նկատենք, որ Աղբրեջանի պատմության դպրոցական դասագրքերում աղբրեջանցիների նախնիներին կապելով «թյուրքալեզու ցեղեր» հռչակված շումերների հետ, նրանց 8-9 հազար տարվա «վաղեմություն» է շնորհվել⁸⁶: Մեիքինյան «չափավորությունը» կարելի է բացատրել երկու հանգամանքով. կա՛մ Աղբրեջանում «սոցմրցության» վերածված պատմաշինարարության թոհուրոհում այ ձեռքը չգիտի, թե ձախն ինչ է անում, կա՛մ էլ հաշվի է առնվել աղբրեջանցիների նախնիներին շումերների հետ աղերսելու զավեշտին ռուսական գիտական լուրջ շրջանակների՝ սպանիչ սարկազմով համեմված վերջին անդրադարձը⁸⁷:

Ոչ պատահաբար՝ հավասարության նշան դնելով «ժողովուրդ» և «ազգ» հասկացությունների միջև, մեիքինյան նենգափոխողներն իրականում փորձել են շրջանցել հայատյաց Ի. Մտալինի՝ աղբրեջանցիների անվանադիր լինելու փաստը: Նրանք պնդում են, որ ազգը կուսակցական գործի գրչի հասարակ շարժումով ստեղծվել չի կարող⁸⁸, մոռանալով, որ «ժողովուրդների հայրը» ոչ թե

83 Տե՛ս Ի. Ս. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-XIX вв., Л., 1949, с. 134.

84 Լ. Մելիքսեթ Բեկ, Վրաց աղբյուրները Չայաստանի և հայերի մասին, հ. 9, եր., 1955, էջ 157:

85 Տե՛ս Քամիզ Մեխիև, с. 9,

86 Տե՛ս Վ. Ալիև, Ի. Բաբաև և ժր., История древнего мира. Уч. для 6-го класса, Баку, 2007, с. 59, 113, Վ. Ալիև, Ի. Իոսուֆով, История Азербайджана, Уч. для 6-го класса, Баку, 2002, с. 55.

87 Տե՛ս Освещение общей истории России и народов постсоветских стран в школьных учебниках истории новых независимых государств, М., 2009, сс. 5, 24-27.

88 Տե՛ս Քամիզ Մեխիև, с. 9.

աղբրեջանական խառնածին ազգն է ստեղծել, այլ թյուրք-օղուզների՝ կովկասյան քաթարներ կամ պարզապես թյուրքեր կոչվող հատվածին հեռահար նպատակներով «աղբրեջանցի» գողացված անվանումն է տվել: Ուստի անհիմաստ է պնդել, թե իբր՝ նույն ժողովրդի նախքան 1930-ական թվականները և դրանից հետո ծնված սերունդներին չի կարելի երկու տարբեր էթնիկ պատկանելություն «վերագրել»⁸⁹: Ի վերջո, այդ սերունդներն անգամ՝ մինչև 1990-ական թվականներն իրենց ազգությամբ ո՛չ աղբրեջանցի էին համարում և ո՛չ էլ աղբրեջանական թյուրք: Նրանք իրենց պարզապես մուսուլման էին կոչում, քանի որ «ինչ ազգից ես» հարցին սովորաբար պատասխանում էին՝ «ման մուսուլման ամ» («ես մուսուլման եմ»), ոչ թե՝ «աղբրեջանցի եմ» կամ «աղբրեջանական թյուրք եմ»: Դա փաստում է, որ աղբրեջանցիների համար էթնիկ պատկանելության բնորոշչին առաջին հերթին ոչ թե անգո ազգությունն էր, այլ դավանած կրոնը, որը նրանց մեկ հանրության մեջ միավորող և համակեցության նորմեր սահմանող առաջին կարևոր գործոնն էր:

Երկրորդ կարևոր գործոնը խոսակցական թյուրքերենն էր, որը հաջողությամբ օգտագործվեց ինչպես նորաթուխ աղբրեջանցիներին մեկ էթնիկ հանրության մեջ համախմբելու, այնպես էլ Խորհրդային Աղբրեջանում տեղաբնիկ և եկվոր ազգային փոքրամասնություններին աղբրեջանականացնելու, այսինքն՝ թյուրքացնելու համար: Վերջին հանգամանքը Խորհրդային Աղբրեջանի ստեղծումից քիչ անց՝ 1923 թ., հրաշալի կերպով գուշակած արևելագետ Վ. Խուդադովը գրել է. «Թյուրքական ձուլումն ընթանում է մեր աչքերի առաջ և մոտ է օրը, երբ անդրկովկասյան Աղբրեջանը բնակեցնող մի շարք ազգություններից միայն հիշողություն կմնա... Այդ ձուլումը թյուրքերեն պետական լեզվով անկախ Աղբրեջանական հանրապետության ստեղծումով կարող է միայն շահել»⁹⁰: Որ Վ. Խուդադովը չէր սխալվել, նորերս փաստեց Իլիամ Ալիևը, հայտարարելով հետևյալը. «Մեր մայրենի աղբրեջանական լեզուն բացառիկ դեր խաղաց աղբրեջանական ժողովրդի ձևավորման, անկախ Աղբրեջանի ձևավորման մեջ»⁹¹:

Ինչպես ցույց տվեց պատմությունը, Խորհրդային Աղբրեջանում ժողովրդագրական պատկերն անշեղորեն փոխվեց հոգուտ աղբրեջանցիների: Դա կատարվեց ինչպես տարբեր մեթոդներով այլազգիների ուժացման, այնպես էլ արտամղման միջոցով: Այսպես, եթե 1924 թ. Աղբրեջանում թյուրքերի թիվը 1.241.758 էր, իսկ տեղաբնիկ լեզգիներինը՝ 109.333, ապա 1989 թ. այդ թվերը համապատասխանաբար կազմում էին 5.804.980 և 171.395: Այսինքն՝ աղբրեջանցիների թիվն աճել էր ավելի քան 4, իսկ ծնելիության մակարդակով նրանց չզիջող լեզգիներինը՝ ընդամենը 1.6 անգամ: Հայերի թիվը 1924 թ. կազմել էր 295.262, 1979 թ.՝ 475.786, իսկ 1989 թ. սկսված բռնագաղթի հետևանքով իջել 390.505-ի: Միտումնավորության մեջ չմեղադրվելու համար համեմատենք հայերի ու աղբրեջանցիների ոչ թե 1924-1989 թթ., այլ 1924-1979 թթ. թվաքանակների աճը (1979 թ. վերջիններիս թիվը եղել է 4.708.832): Արդյունքում կայարգվի, որ այդ ընթացքում հայերն ավելացել են ընդամենը 1.6, իսկ աղբրեջանցիները՝ մոտ 4 անգամ⁹²: Ընդ որում, Աղբրեջանի գաղութի վերածված Լեռնային Ղարաբաղում 1924-1989 թթ.

89 Նույն տեղում:

90 В. Худадов, Современный Азербайджан. — “Новый восток”, М., 1923, No 3, с. 171.

91 <http://ru.president.az/articles/2041>.

92 Стен Большая советская энциклопедия, т. I, М., 1926, с. 641, http://ru.wikipedia.org/wiki/Население_Азербайджана.

տեղաբնիկ հայության թիվը գործնականում չի ավելացել՝ համապատասխանաբար 142.470 և 145.500, մինչդեռ ադրբեջանցիների թիվն աճել է 4.5 անգամ⁹³: Հատկանշական է, որ եթե 1926 թ. մարդահամարի տվյալներով հայերը կազմել են Ադրբեջանի բնակչության 5.4%-ը, ապա 1989 թ.՝ ընդամենը 2.7%-ը⁹⁴: Իսկ եթե անդրադառնանք թալիշներին, ապա Ադրբեջանում ժողովուրդների բարեկամության մասին մեծաքանակ ակնդրումների ստահողությունն էլ ավելի ցայտուն կդրսևորվի:

Ադրբեջանի անկախացումն ադրբեջանական խառնածին ազգի ձևավորման համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծեց: Եթե, օրինակ, 1989-1999 թթ. Ադրբեջանում ադրբեջանցիների թիվը տոկոսային հարաբերակցությամբ 82.7-ից հասել էր 90.6%-ի, ապա ազգային փոքրամասնությունների մոտ այդ ցուցանիշը կամ մնացել էր նույնը, կամ էլ ավելի էր իջել: Այս առումով որոշ բացառություն էին կազմում փոքրաքանակ թուրքերն ու քրդերը, ինչը աննշան մեխանիկական աճի հետևանք էր⁹⁵: Ներկայումս ադրբեջանցիների հետագա համախմբմանն է ուղղորդված Ղարաբաղյան հիմնահարցի շուրջ այդ երկրում ծավալվող հակահայ անգուսպ հիստերիան, որի գլխավոր նպատակն էթնոմշակութային հոգեկերտվածքի հիմքում հակահայությունն ունեցող՝ կառավարելի, զոմբիացված ազգի ձևավորումն է:

8. Մերօրյա իրադարձությունների նենգափոխումը

Մեծիկյան նենգափոխողները հայության նկատմամբ 1980-ական թվականների վերջերին - 1990-ական թվականների սկզբներին ադրբեջանական վանդալների գործադրած ցեղասպանության փաստերը քողարկելու նպատակով նույնպես փորձել են ապակողմնորոշել ընթերցողին: Ուստի՝ նրանք հայտարարում են, թե իբր հայերը «նախընտրում են լռել այն մասին, որ իրենք են կանգնած Կապանում, Սեդրիում, Ասկերանում, Գուգարքում ջարդերի ու սպանությունների հետևում, որոնց ընթացքում տուժել են Հայաստանի ադրբեջանական ազգության անհամեմատ ավելի շատ քաղաքացիներ, քան հայեր՝ ադրբեջանական քաղաքներում»⁹⁶: Այս զառանցանքում միայն մեկ ճիշտ միտք կա: Դա այն է, որ Ասկերանը ոչ թե Ադրբեջանում, այլ իրոք՝ Հայաստանում է գտնվում: Մեծիկյան գրպարտագրում նաև մեկ ճիշտ հռետորական հարց կա. «Գտնվե՞լ է արդյոք ադրբեջանցուն իր մոտ թաքցրած և հարևանի կյանքը փրկած Հայաստանի մի բնակիչ»⁹⁷: Պատասխանում ենք. ո՛չ, չի գտնվել, որովհետև ի տարբերություն Ադրբեջանի, Հայաստանում դրա անհրաժեշտությունը չի զգացվել: Եվ դա այն պարզ և իրենց իսկ քաջ հայտնի պատճառով, որ Հայաստանում որևէ ադրբեջանցու ոչ ոք անգամ խեթ չի նայել: Ինչ վերաբերում է մեծիկյան խմբի կողմից սուսգայիթյան ջարդարար է. Գրիգորյանին նպատակադիր կերպով գտարյուն հայ ներկայացնելու փաստին, ապա իրենց իսկ վկայակոչած «միութենական դատաստանության

93 Տե՛ս Большая советская энциклопедия, т. I, тг 641, Կ. Ե. Խոջաբեկյան, Արցախը փորձության ժամին, Եր., 1991, ս. 66, 67:

94 Տե՛ս Կ. Ե. Խոջաբեկյան, նշվ. աշխ., տգ 66, 67:

95 Տե՛ս http://ru.wikipedia.org/wiki/Население_Азербайджана.

96 Տե՛ս Рамиз Мехтиев, с. 20.

97 Նույն տեղում

նյութերում»⁹⁸ փաստագրված է, որ նրա մայրն ամուսնալուծված և որդուն հայաստացության ոգով դաստիարակած աղբրեջանուհի է: Այստեղ տեղին է հիշել հանճարեղ պարսիկ բանաստեղծ Նիզամու հետևյալ տողերը. «Անիծելով թուրքին, բերանը բացեց, /Թե թուրքն իր մորից խռովարար է ծնվում»⁹⁹:

Մեհթիսյան նենգափոխումների ուսուցողական սրբագրումները կարելի է շարունակել անվերջ: Սակայն քանի որ դրանց հեղինակներին քաջածանոթ ոչխարի մածուրն ոչ թե սև է, այլ սպիտակ (ինչն ըստ էության փորձեցինք նրանց հասկացնել), ասվածն առայժմ բավարար համարենք: Այդուհանդերձ, ավելորդ չենք համարում փիլիսոփայից աղբրեջանական «պատմագիտության» ծանր հրետանու վերածված Ռ. Մեհթիսին ու նրա օգնականներին մատնացույց անել անհասկանալիորեն դեռևս աղբրեջանցի չհամարվող Սաադիի հետևյալ տողերը. «Վախենում եմ Քաաբա (Մեքքա) չհասնես ո՛վ արաբ, / Քանզի այն ճամփան, որ դու ես գնում, դեպի Թուրքեստան է տանում»:

Հ. Գ. Աղբրեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար Ռ-ամիզ Մեհթիսի կողմից էթիկայի տարրական նորմերի ոտնահարմամբ ՀՀ նախագահի՝ իբրև մարդու և պետական գործչի անուրանալի արժանիքներն ու մտավոր կարողությունները հանիրավի կասկածի տակ դնելը խոսում է ներքուստ արդեն Ղարաբաղի կորստի հետ հաշտված այդ ասունի անգոր կատաղության և պետական այրին անհրաժեշտ արժանիքներից իսպառ զուրկ լինելու մասին:

Summary

ONCE MORE ABOUT RAMIZ MEHTIEV'S "MASTERPIECE"

Artashes I. Shahnazaryan

The obvious distortion of historical facts and events in the publication “Goris 2010, a Season of the Theatre of the Absurd,” signed by Ramiz Mehtiev, the chief of staff of the president of the Republic of Azerbaijan are revealed in this article. “Scientists” are contributing to the ongoing anti-Armenian hysteria in Azerbaijan by ignoring the content of Armenian lithography and other original sources by “revealing” “dukes” and duchies in Medieval Artsakh, by appropriating the works by Armenian historians and their attempts at subterfuge are refuted by Arabic, Armenian and Georgian original sources.

Illustrated here is the latest incursion against Armenian history and Armenian culture by Azerbaijani “scientists,” which is intricately connected with that country’s consistent policy, since independence, of the massive destruction of Armenian monuments and the distortion of medieval place names and serves as a so-called “scientific basis” for such crimes.

Also elucidated here is their latest attempt to artificially present the time period of the formation of the Azerbaijani people older than it actually is and to connect them with the old and medieval history of the region.

98 Նույն տեղում:

99 «Գրական թերթ», Եր., 23 նոյեմբերի, 1989: